ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԶԱՔԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ ՍՏԵՓԱՆԻ

ԾՈՎԱՅԻՆ ԵԼՔ ՉՈՒՆԵՑՈՂ ԵՐԿՐՆԵՐԻ ՏԱՐԱՆՑԻԿ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

ԻԳ.00.04 «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2025

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ЗАКАРЯН ТИГРАН СТЕПАНОВИЧ

РЕАЛИЗАЦИЯ ТРАНЗИТНЫХ ПРАВ СТРАН, НЕ ИМЕЮЩИХ ВЫХОДА К МОРЮ, В МЕЖДУНАРОДНЫХ ОТНОШЕНИЯХ (НА ПРИМЕРЕ РА)

Диссертация на соискание научной степени кандидата политических наук по специальности 23.00.04 “Международные отношения”

АВТОРЕФЕРАТ

ЕРЕВАН – 2025

Ատենախոսության թեման հաստատվել է **Երևանի պետական համալսարանում**

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վահան Առաքելի Բայբուրդյան

Պաշտոնական
ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ռուբեն Հովհաննեսի Մելքոնյան

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Շիրակ Արտեմի Թորոսյան

Առաջատար կազմակերպություն՝ **Երևանի «Գլաձոր» համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի հունվարի 23-ին՝ ժամը 14:00-ին, ԵՊՀ-ում գործող ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» 056 մասնագիտական խորհրդում:
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2025 թվականի դեկտեմբերի 22-ին:

ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի 056 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, քաղաքական
գիտությունների թեկնածու, դոցենտ **Սարգսյան Առնակ Գեորգիի**

Тема диссертации утверждена в **Ереванском государственном университете**

Научный руководитель: доктор исторических наук, профессор
Ваган Аракелович Байбуртян

Официальные оппоненты:
доктор исторических наук, профессор **Рубен Оганнесович Мелконян**
кандидат исторических наук, доцент **Ширак Артемович Торосян**
Ведущая организация: **Ереванский университет "Гладзор"**

Защита состоится 23 января 2026 г., в 14:00 часов на действующем в ЕГУ специализированном совете 056 «Политология и международные отношения» МОНКС КВОН РА. Адрес: РА, г. Ереван 0025, Алека Манукяна, 1.
С диссертацией можно ознакомиться в библиотеке имени Саркиса и Мари Измирлянов ЕГУ.
Автореферат разослан 22 декабря 2025 г.

Научный секретарь
специализированного совета 056 МОНКС КВОН РА,
кандидат политических наук, доцент **Саргсян Арнак Георгиевич**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ծովային ելքի բացակայությունն արտաքին առևտրի համար անբարենպաստ միջավայր ստեղծող, տնտեսական զարգացմանը խոչընդոտող նշանակալի գործոն է: Միջազգային հարաբերությունների տեսանկյունից հատկապես հետաքրքիր է քաղաքական այն խոցելիության ուսումնասիրությունը, որը հատուկ է ծովային ելք չունեցող երկրներին իրենց առափնյա հարևանների հետ հարաբերություններում և արտահայտվում է տարանցման պայմանների շուրջ բանակցություններում: Ծովային ելք չունեցող երկրները, բացառությամբ եվրոպական որոշ զարգացած երկրների, դեպի ծով ազատ ու անխափան տարանցման հարցում շարունակում են բախվել առափնյա երկրների հարուցած խոչընդոտներին, որոնք տարանցումը ծախսատար են դարձնում՝ բացասաբար անդրադառնալով արտահանվող ապրանքների մրցունակության, ներմուծվող ապրանքների՝ մատչելիության վրա:

Որքան էլ միջազգային իրավունքը ծովային ելք չունեցող երկրների համար տարանցիկ իրավունքներ է նախատեսում, առափնյա երկրների ինքնիշխանությամբ հավասարակշռվող այդ իրավունքները կյանքի են կոչվում քաղաքական համաձայնությունների միջոցով: Կանոնների վրա հիմնված «լիբերալ աշխարհակարգի փլուզմամբ[1]» առաջացող մարտահրավերների[2], միջազգային իրավական կարգավորումների թուլացման պայմաններում էլ ավելի է կարևորվում ծովային ելք չունեցող երկրների տարանցիկ իրավունքների իրացման քաղաքական հիմքերի ուսումնասիրությունը:

Թեև դեպի ծով ազատ տարանցման իրավունքները դեռևս 20-րդ դարում ամրագրվել են միջազգային իրավունքի նորմերով, մինչ այժմ խնդրահարույց և արդիական է մնում այն հարցը, թե գործնականում այդ նորմերն ինչպես են կիրառվում: Աշխարհագրական դիրքը, տարածաշրջանը, ինչպես նաև հարևանների հետ հարաբերություններն էական ազդեցություն են ունենում ծովային ելք չունեցող առանձին երկրների տարանցման պայմանների վրա: Առանձնահատուկ կարևորություն ունի ծովային ելք չունեցող այն երկրների տարանցման միջավայրի ուսումնասիրությունը, որոնց հարևաններն ամբողջովին մերժում են դեպի ծով ազատ ելք տրամադրելու սկզբունքը: Այդ երկրների շարքին է դասվում նաև Հայաստանը: 1993թ. հայ-թուրքական սահմանի միակողմանի փակման հետևանքով առաջացած կախվածությունը՝ հիմնականում վրացական, մասամբ՝ իրանական նավահանգիստներից, խոչընդոտներ է հարուցում նաև այդ

---

[1] **Mearsheimer J. J.**, Bound to Fail: The Rise and Fall of the Liberal International Order, International Security, 43(4), 2019, p. 30:

[2] Տե՛ս **Lake D. A.**, **Martin L. L**, **Risse T.**, Challenges to the Liberal Order: Reflections on International Organization, International Organization, 75(2), 2021, pp. 225-257:

ուղղություններով իրականացվող տարանցիկ ապրանքաշրջանառության պայմանների բարելավման հարցում՝ ընդգծելով Հայաստանի տարանցիկ իրավունքների իրացման վրա ազդող գործոնների վերլուծության արդիականությունը:

Հայաստանի անվտանգային, տնտեսական շահերի տեսանկյունից թեմայի ուսումնասիրությունն առանձնահատուկ արդիականություն է ստանում 2020թ. 44-օրյա պատերազմի արդյունքում Հարավային Կովկասում ձևավորված տարածաշրջանային նոր իրողությունների, Հայաստան-Թուրքիա, Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման գործընթացներում տնտեսական ու տրանսպորտային կապերի ապաշրջափակման խնդրի կարևոր նշանակության համատեքստում:

Ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Ատենախոսության ուսումնասիրության օբյեկտը ծովային ելք չունեցող երկրների և իրենց հարևան առափնյա երկրների միջև հարաբերություններն են, առարկան՝ տարանցման հարցը Թուրքիայի, Վրաստանի և Իրանի հետ Հայաստանի հարաբերություններում:

Հիմնախնդրի գիտական ուսումնասիրվածության աստիճանը: Մասնագիտական գրականության մեջ ծովային ելք չունեցող երկրների հիմնախնդիրներն առավելապես ուսումնասիրվել են միջազգային իրավունքի և տնտեսագիտության տեսական դիրքերից: Այս առումով, թեև առկա է թեմայի վերաբերյալ մեծածավալ գրականություն, տարանցման հարցերի համակողմանի լուսաբանման գործում որոշակիորեն բաց է մնում հիմնախնդրի ուսումնասիրումը քաղաքական լույսի ներքո: Սույն ատենախոսական աշխատությունը փորձ է անում լրացնելու այդ բացը:

Իրավագետ հեղինակներից արժեքավոր են Կ. Ուփրեթիի[3], Հ. Տյուրկի[4], Գ. Հաֆների[5] աշխատությունները: Կ. Ուփրեթիի նշյալ աշխատությունները համապարփակ կերպով ներկայացնում են տարանցումը կարգավորող միջազգային իրավական դաշտի ողջ համալիրը՝ սովորութային իրավունքից մինչև «փափուկ» իրավունք: Քաղաքական վերլուծության համար կարևոր նյութ է Կ.

---

[3] Տե՛ս **Uprety K.**, Landlocked States and Access to the Sea: An Evolutionary Study of a Contested Right, *Penn State International Law Review*, 12(3), 1994, pp. 401-496; **Uprety K.**, The Transit Regime for Landlocked States: International Law and Development Perspectives, Law, Justice, and Development Series, Washington, DC, World Bank, 2006, 216 p.:

[4] Տե՛ս **Tuerk H.**, Forgotten Rights? Landlocked States and the Law of the Sea, Wolfrum R., Seršić M., Šošić T. (eds.), Contemporary Developments in International Law: Essays in Honour of Budislav Vukas, Leiden, Brill Nijhoff, 2016, pp. 337-359:

[5] Տե՛ս **Hafner G.**, Die Gruppe der Binnen- und geographisch benachteiligten Staaten auf der Dritten Seerechtskonferenz der Vereinten Nationen, *Zeitschrift für Ausländisches Öffentliches Recht und Völkerrecht*, 38(3-4), 1978, S. 568-615:

Ուփրեթիի անդրադարձը տարանցման վերաբերյալ միջազգային բազմակողմ պայմանագրերի նախապատրաստական բանակցություններին, դրանցում ներկայացված տարանցիկ ու ծովային ելք չունեցող երկրների շահերին: Ծովային իրավունքի միջազգային տրիբունալի դատավոր Հ. Տյուրկը համեմատում և վերլուծում է ծովային ելք չունեցող երկրների ինչպես տարանցիկ, այնպես էլ այլ իրավունքների[6] վերաբերյալ միջազգային բազմակողմ պայմանագրերը: Հ. Տյուրկը, որը նաև Ծովային իրավունքի հարցերով Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) 3-րդ համաժողովի ընթացքում ղեկավարել է ծովային ելք չունեցող և աշխարհագրական անբարենպաստ դիրք ունեցող երկրների բանակցային համատեղ խումբը, ներկայացնում է դրա ներսում շահերի բախումը: Վերջին հարցին է անդրադառնում նաև ավստրիացի իրավագետ, դիվանագետ, ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնաժողովի նախկին անդամ Գ. Հաֆների նշյալ աշխատությունը:

Մի շարք տնտեսագետներ, ուսումնասիրելով ծովային ելք չունեցող զարգացող երկրների տնտեսական թերզարգացման հիմնախնդիրն ու առաջարկելով տնտեսական առաջընթացին միտված լուծումներ, անդրադառնում են նաև տարանցիկ երկրների հետ հարաբերություններում ծովային ելք չունեցող երկրների քաղաքական խոցելիության խնդրին: Այս առումով արժեքավոր են Մ. Ֆայի, Ջ. ՄաքԱրթուրի, Ջ. Սաքսի և Տ. Սնոուի[7], Ջ. Արվիսի, Ռ. Քերյութերսի, Գ. Սմիթի և Ք. Վիլագբիի[8] աշխատությունները:

Աշխարհագրագետ Մ. Ի. Գլասները[9] դասակարգում է ծովային ելք չունեցող երկրներն ըստ աշխարհագրական, պատմական, քաղաքական և տնտեսական հատկանիշների՝ ընդգծելով ծովային ելքի բացակայության աշխարհագրական ընդհանուր առանձնահատկությունից զատ՝ այս երկրների միջև առկա նկատելի տարբերությունները:

Հայ հեղինակներից ծովային ելք չունեցող երկրների հիմնախնդիրներին հիմնականում անդրադարձել են տնտեսագետները: Հարկ է նշել Գ. Նազարյանի, Դ. Հախվերդյանի, Ա. Եղիազարյանի, Ա. Գրիգորյանի, Ա. Փախլյանի և Ա.

---

[6] Սույն ատենախոսության հետազոտության շրջանակից դուրս են ծովային ելք չունեցող երկրներին տարանցիկ իրավունքներից բացի վերապահվող այլ իրավունքները, այդ թվում՝ ծովային տնտեսական գոտիների և ծովային հատակի շահագործման իրավունքները:

[7] Տե՛ս **Faye M.**, **McArthur J.**, **Sachs J.**, **Snow T.**, The Challenges Facing Landlocked Developing Countries, *Journal of Human Development*, 5(1), 2004, pp. 31-68; **Snow T.**, **Faye M.**, **McArthur J.**, **Sachs J.**, Country Case Studies on the Challenges Facing Landlocked Developing Countries, Human Development Occasional Papers (1992-2007), UNDP, 2003, 132 p.:

[8] Տե՛ս **Arvis J.-F.**, **Carruthers R.**, **Smith G.**, **Willoughby C.**, Connecting Landlocked Developing Countries to Markets: Trade Corridors in the 21st Century, Washington, DC, World Bank, 2011, 274 p.:

[9] Տե՛ս **Glassner M. I.**, Access to the Sea for Developing Land-Locked States, The Hague, Martinus Nijhof, 1970, 310 p.:

Աբրահամյանի[10] համահեղինակած մենագրությունը, որում ծովային ելք չունեցող երկրների տնտեսական զարգացման համար առաջարկվում է բարելավել ներքին տրանսպորտային ենթակառուցվածքները, ընդունել տարածաշրջանային ենթակառուցվածքային ինտեգրման ռազմավարություն և ներդրումներ կատարել տրանսպորտային ծախսերից քիչ կախում ունեցող արդյունաբերական ճյուղերում: Այս քայլերը կարևորվում են նաև Ա. Եղիազարյանի[11], Ա. Փախլյանի[12], Գ. Նազարյանի և Ա. Փախլյանի[13], Դ. Գալոյանի[14] աշխատություններում: Ա. Թադևոսյանը[15] կարևորում է Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) շրջանակում ընթացող բանակցություններում ծովային ելք չունեցող երկրների խնդիրները հասցեագրող միջոցառումների ընդունումը, Ա. Մարկոսյանը և Բ. Ավագյանը[16]՝ տարածաշրջանային, մասնավորապես՝ հարևան երկրների հետ առևտրի խթանումը:

Իրավագիտական աշխատություններից կարելի է առանձնացնել Վ. Քոչարյանի[17] անդրադարձը ծովային ելք չունեցող երկրների ինչպես տարանցիկ, այնպես էլ այլ իրավունքներին, Ա. Մկրտիչյանի[18] հոդվածը, որն ընդհանրական

---

[10] Տե՛ս **Նազարյան Գ.**, **Հախվերդյան Դ.**, **Եղիազարյան Ա.**, **Գրիգորյան Ա.**, **Փախլյան Ա.**, **Աբրահամյան Ա.**, Ծովային ելք չունեցող երկրների միջազգային մրցունակության հիմնախնդիրները (ՀՀ օրինակով), Ամբերդ հետազոտական կենտրոն, Երևան, Տնտեսագետ, 2013, 112 էջ:

[11] Տե՛ս **Yeghiazarian A.**, Armenia as a Landlocked State: Transit Opportunities, *Central Asia and the Caucasus*, 15(4), 2014, pp. 80-94:

[12] Տե՛ս **Pakhlyan A.**, Foreign Economic Relations between Landlocked and Coastal Neighboring Countries (Case of Armenia and Georgia), *Telavi State University. Transactions*, 1(26), 2013, pp. 29-34:

[13] Տե՛ս **Назарян Г.**, **Пахлян А.**, Приоритеты развития транспортных логистических систем в странах без выхода к морю, Инновационный потенциал модернизации экономики: инструменты логистики и маркетинга (т. II), Материалы международной научно-практической конференции 10-11 октября 2013 года, IX Южно-Российский логистический форум, Ростов-на-Дону, Издательство РГЭУ (РИНХ), 2013, с. 130-136:

[14] Տե՛ս **Галоян Д.**, Проблемы регионального сотрудничества стран, не имеющих выхода к морю, *Экономика и Предпринимательство*, No. 1 ч.2 (42-2), 8(1-2), 2014, с. 49-51:

[15] Տե՛ս **Թադևոսյան Ա.** Ծովային ելք չունեցող զարգացող երկրների հիմնախնդիրները (ՀՀ օրինակով), Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում. Հանրապետական գիտաժողովի նյութեր, № 1, 2007, էջ 213-216:

[16] Տե՛ս **Մարկոսյան Ա.**, **Ավագյան Բ.**, Դեպի ծով ելք չունեցող երկրների տնտեսությունների զարգացման հեռանկարները, *Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի*, 2(26), 2012, էջ 29-47; **Մարկոսյան Ա.**, **Ավագյան Բ.**, Անբարենպաստ աշխարհագրական դիրքը և դեպի ծով ելք ունենալու պետության իրավունքը, *Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի*, 4(28), 2012, էջ 41-54:

[17] Տե՛ս **Քոչարյան Վ.**, Միջազգային իրավունք, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2002, էջ 309:

[18] Տե՛ս **Mkrtichyan A.**, Land locked states in the International Law of the Sea, International Conference of Law, European Studies and International Relations, No. 7, 2019, pp. 193-199:

կերպով ներկայացնում է ծովային ելք չունեցող երկրների իրավունքները, սակայն չի անդրադառնում դրանց իրացման խնդրին իր առափնյա հարևանների հետ Հայաստանի հարաբերությունների համատեքստում: Ծովային ելք չունեցող երկրների իրավունքների պատմական զարգացմանը, ինչպես նաև դեպի ծով ազատ ելքի ու տարանցիկ երկրների ինքնիշխանության սկզբունքների միջև «առճակատմանն» է անդրադառնում Ա. Աբովյանը[19]:

Քաղաքագետ Ն. Գալստյանը[20], վերլուծելով փոքր պետությունների արտաքին քաղաքականության ընդհանրական որոշ հատկանիշներ (գերզգայունությունը՝ միջազգային կարգի, միջազգային համակարգի կառուցվածքի ու դրանց փոփոխությունների, ինչպես նաև խոցելիությունն արտաքին միջամտության նկատմամբ) և դրանք վերագրելով նաև ծովային ելք չունեցող երկրներին, ընդգծում է, որ այդ հատկանիշների դրսևորումը, տարածաշրջանային միջավայրով պայմանավորված, կարող է համատեքստային–իրավիճակային բնույթ կրել:

Պատմագիտության բնագավառում Շ. Թորոսյանը[21] ներկայացրել է ծովային ելքի հիմնահարցը Հայաստանի առաջին հանրապետության արտաքին քաղաքականությունում, մասնավորապես՝ դեպի Միջերկրական և Սև ծովեր ինքնիշխան ելք ստանալու ուղղությամբ ձեռնարկված քայլերը:

Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) երկրները ներկայացնող հեղինակների կողմից ծովային ելք չունեցող երկրների հիմնախնդիրները լայնորեն չեն ուսումնասիրվել: Ուսումնասիրությունները հիմնականում կատարվել են իրավագետ հեղինակների կողմից, ընդ որում՝ առավելապես խորհրդային շրջանում: Այս շարքից առանձնանում է Վ. Գոլիցինի մենագրությունը[22], որը ներկայացնում է ծովային ելք չունեցող երկրների իրավունքների պատմական զարգացումը մինչև «Ծովային իրավունքի մասին» 1982թ. կոնվենցիայի ընդունումը: Հետխորհրդային շրջանի իրավագետ

---

[19] Տե՛ս **Աբովյան Ա.**, Ներմայրցամաքային պետությունների իրավունքների ապահովմանն ուղղված իրավակարգավորման էվոլյուցիան. սովորույթից կոդիֆիկացում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, 1(2), 2020, էջ 174-195; **Աբովյան Ա.**, Դեպի ծով ազատ հասանելիության և պետությունների ինքնիշխանության հարաբերակցությունը միջազգային ծովային իրավունքում, *Պետություն և իրավունք*, 3(94), 2022, էջ 202-208:

[20] Տե՛ս **Գալստյան Ն.**, Փոքր պետությունների արտաքին քաղաքական վարքի հիմնական հատկանիշներն ու պատճառները, *Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն*, 2(29), 2019, էջ 3-16:

[21] Տե՛ս **Թորոսյան Շ.**, Ծովային ելքի հիմնահարցը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունում 1919-1920 թթ., Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2017, 233 էջ:

[22] Տե՛ս **Голицын В. В.**, Внутриконтинентальные государства и международное морское право, Москва, Международные отношения, 1978, 120 с:

հեղինակներից դեպի ծով ազատ ելքի խնդրին են անդրադարձել Ա. Ջարակյանը[23], Ա. Կիպետը[24]:

Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակման հարցի ուսումնասիրման համար օգտակար են եղել միակողմանի հարկադրանքի միջոցների վերաբերյալ Օ. Էլագաբի[25], միջազգային պայմանագրերի՝ անվտանգության հետ կապված բացառություններ նախատեսող դրույթների վերաբերյալ Ա. Ֆ. Լոուենֆելդի[26], Մ. Ջ. Հահնի[27], Հ. Լ. Շլոեմանի և Ս. Օհլովի[28] աշխատությունները:

Հայ հեղինակներից Հայաստանի շրջափակման խնդրին անդրադարձել են Տ. Սիմոնյանը[29], Ա. Պապյանը[30], Ա. Սահակյանը[31], Ռ. Ջանբազյանը[32], Ն. Ներսիսյանը[33]: Տ. Սիմոնյանը վիճարկում է ԱՀԿ-ի շրջանակում Թուրքիայի կողմից Հայաստանի դեմ կիրառված վերապահման իրավաչափությունը: Ա. Պապյանը Հայաստանի դեմ շրջափակումը որակում է «պատերազմական միջոցառում», Ն. Ներսիսյանը՝ «առանց պատերազմ հայտարարելու հարձակման ենթարկելու փաստ»: Նշված երկու հեղինակներն էլ անհրաժեշտ են համարում

---

[23] Տե՛ս **Джаракян А. Л.**, Проблемы доступа к морю внутриконтинентальных государств в международном праве, диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Москва, РУДН, 2000, 172 с.:

[24] Տե՛ս **Кипеть А. И.**, Развитие международно-правовой регламентации прав внутриконтинентальных государств в международном морском праве, *Журнал международного права и международных отношений*, № 4, 2009, с. 28-33:

[25] Տե՛ս **Elagab O.**, Coercive Economic Measures Against Developing Countries, *International and Comparative Law Quarterly*, 41(3), 1992, pp. 682-694:

[26] Տե՛ս **Lowenfeld A. F.**, International Economic Law, 2nd ed., Oxford, Oxford University Press, 2008, 900 p.:

[27] Տե՛ս **Hahn M. J.**, Vital Interests and the Law of GATT: An Analysis of GATT's Security Exception, *Michigan Journal of International Law*, 12(3), 1991, pp. 558-620:

[28] Տե՛ս **Schloemann H. L.**, **Ohlhoff S.**, "Constitutionalization" and Dispute Settlement in the WTO: National Security as an Issue of Competence, *American Journal of International Law*, 93(2), 1999, pp. 424-451:

[29] Տե՛ս **Simonyan T.**, Armenian-Turkish Relations in the Legal Framework of the WTO, *Armenian Yearbook of International and Comparative Law*, vol. 1, 2013, pp. 148-150:

[30] Տե՛ս **Պապյան Ա.**, Հայաստանի տարանցիկ հնարավորությունները՝ ըստ միջազգային իրավունքի, Հայրենատիրություն. Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր, Հոդվածների ժողովածու, Երևան, «Ասողիկ» հրատարակչություն, 2012, էջ 174-176; **Պապյան Ա.**, Թուրքիայի Հանրապետության կողմից Հայաստանի Հանրապետության շրջափակումը որպես միջազգային իրավունքի և ստանձնած պարտավորությունների կոպիտ խախտում, Ազգ, 03.04.2007, էջ 41-45:

[31] Տե՛ս **Sahakyan A.**, Economic Blockades and International Law: The Case of Armenia, The Armenian Weekly, 20.02.2014:

[32] Տե՛ս **Janbazian R.**, Land-Locked: The Necessity of Open Borders in Armenia, The Armenian Weekly, 23.12.2014:

[33] Տե՛ս **Ներսիսյան Ն.**, Հայաստանի շրջափակումը, միջազգային փաստաթղթեր և ինքնապաշտպանության իրավունք, «Ինֆոքոմ», 16.05.2019:

Հայաստանի կողմից շրջափակման խնդիրը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի և Գլխավոր ասամբլեայի քննության առարկա դարձնելը: Ա. Սահակյանը կարևոր է համարում քայլերի ձեռնարկումը՝ Հայաստանի դեմ շրջափակումը ՄԱԿ-ի կողմից որպես միակողմանի հարկադրանքի միջոց ճանաչելու ուղղությամբ: Ռ. Ջանբազյանը փորձում է հիմնավորել, որ Թուրքիայի կողմից տնտեսական շրջափակումը և դիվանագիտական բոյկոտը հակասում են ՄԱԿ-ի կանոնադրությանը:

Տնտեսագետներ Ա. Փախլյանը, Ս. Աղաջանյանը, Տ. Վարդանյանը, Տ. Միքայելյանը, Ա. Հարությունյանը[34], ուսումնասիրելով Թուրքիայի կողմից Հայաստանի ապաշրջափակման հնարավորություններն ու մարտահրավերները, թուրքական կապիտալի հնարավոր էքսպանսիայից խուսափելու համար առաջարկում են օրենսդրական կարգավորումներով վերահսկելի դարձնել օտարերկրյա կապիտալի ազդեցությունը ՀՀ տնտեսական և քաղաքական կյանքում:

Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակման հարցն ուսումնասիրած վերոնշյալ հեղինակների հետազոտության շրջանակը չի ներառել Թուրքիայի դեմ իրավական գործընթացներ նախաձեռնելու քաղաքական խոչընդոտները: Այս բացը փորձել ենք լրացնել սույն ատենախոսության մեջ:

Հայ-վրացական հարաբերություններում տարանցման հարցն ուսումնասիրելիս օգտագործված աշխատություններից է Ա. Իդանի և Բ. Շաֆֆերի[35] հոդվածը, որում հեղինակները վերլուծում են ծովային ելքի բացակայության ազդեցությունը տարանցիկ երկրների հանդեպ ծովային ելք չունեցող հետխորհրդային երկրների վարած արտաքին քաղաքականության վրա:

Հայ հեղինակներից Ա. Եղիազարյանի, Տ. Ջրբաշյանի, Ա. Իսկանդարյանի, Ս. Գրիգորյանի, Ա. Շաբոյանի, Գ. Սարգսյանի, Պ. Հովհաննիսյանի և Տ. Գրիգորյանի[36] համահեղինակած աշխատությունն անդրադառնում է տարանցման հարցը կարգավորող հայ-վրացական երկկողմ իրավապայմանագրային դաշտին, ինչպես նաև ԱՀԿ-ի և ԱՊՀ-ի շրջանակներում գործող կարգավորումներին:

---

[34] Տե՛ս **Փախլյան Ա.**, **Աղաջանյան Ս.**, **Վարդանյան Տ.**, **Միքայելյան Տ.**, **Հարությունյան Ա.**, Թուրքիայի կողմից Հայաստանի ապաշրջափակման հնարավորություններն ու մարտահրավերները, Ամբերդ հետազոտական կենտրոն, Երևան, Տնտեսագետ, 2022, 189 էջ:

[35] Տե՛ս **Idan A.**, **Shaffer B.**, The Foreign Policies of Post-Soviet Landlocked States, *Post-Soviet Affairs*, 27(3), 2011, pp. 241-268:

[36] Տե՛ս **Yeghiazaryan A.**, **Jrbashyan T.**, **Iskandaryan A.**, **Grigoryan S.**, **Shaboyan A.**, **Sargsyan G.**, **Hovhannisyan P.**, **Grigoryan T.**, Armenia and Georgia Economic Relations: Unrealised Opportunities, Yerevan, UNDP Armenia, 2007, 80 p.:

Ծովային ելք չունեցող երկրների տարանցիկ իրավունքների վերաբերյալ Իրանի դիրքորոշման արժեքավոր ուսումնասիրություն է միջազգային իրավունքի պարսիկ մասնագետ Բ. Ա. Դիբայի[37] աշխատությունը:

Վրաստանի և Իրանի տարածքով հայկական բեռնափոխադրումների տարանցման ռեժիմներին վերաբերող մի շարք հարցեր մնում են չլուսաբանված: Վերը նշված աշխատությունները մասնավորապես չեն անդրադառնում տարանցման պայմանների շուրջ հայ-վրացական և հայ-իրանական երկկողմ միջպետական բանակցություններին, որոնց առանձնահատկությունները փորձել ենք ներկայացնել աղբյուրագիտական հարուստ նյութերի ուսումնասիրության հիման վրա:

Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության (ՍԾՏՀԿ) և «Եվրոպա-Կովկաս-Ասիա միջազգային տրանսպորտային միջանցք» (ՏՐԱՍԵԿԱ) ծրագրի վերաբերյալ մի խումբ հեղինակների աշխատություններն օգտակար են եղել հայկական ապրանքների տարանցման պայմանների բարելավման վրա Հայաստանի առափնյա հարևաններին ընդգրկող տարածաշրջանային այդ հարթակների, դրանց շրջանակներում գործող կարգավորումների ազդեցությունը գնահատելու համար: Հարկ ենք համարում առանձնացնել սևծովյան տարածաշրջանում տնտեսական ինտեգրացիայի, դրա առջև կանգնած մարտահրավերների, ՍԾՏՀԿ-ի իրավական, քաղաքական առանձնահատկությունների վերաբերյալ Պ. Մանոլիի[38] ծավալուն աշխատությունը: Այդ խմբին կարելի է դասել նաև Յ. Ծանտուլիսի[39] և Բ. Քուփիթերսի[40] աշխատությունները:

Հայ հեղինակներից հարկ ենք համարում հիշատակել Վ. Դավթյանի[41] հոդվածը, որը ներկայացնում է Հայաստանի տրանսպորտային անվտանգության խնդիրը ՏՐԱՍԵԿԱ-ի և «Հյուսիս-հարավ» միջանցքի վրա ազդող աշխարհաքաղաքական գործոնների համատեքստում: Հարավային Կովկասով

---

[37] Տե՛ս **Diba B. A.**, Iran and the International law of the Sea and Rivers, CreateSpace Independent Publishing Platform, 2011, 250 p.:

[38] Տե՛ս **Manoli P.**, The Dynamics of Black Sea Subregionalism, New York, Routledge, 2016, 270 p.:

[39] Տե՛ս **Tsantoulis Y.**, Geopolitics, (sub)Regionalism, Discourse and a Troubled 'Power Triangle' in the Black Sea, *Southeast European and Black Sea Studies*, 9(3), 2009, pp. 243-258:

[40] Տե՛ս **Coppieters B.**, The Politicisation and Securitisation of Ethnicity: The Case of the Southern Caucasus, *Civil Wars*, 4(4), 2001, pp. 73-94:

[41] Տե՛ս **Davtyan V.**, Armenia's Transport Security Within the Framework of ITC TRACECA and "North-South", Proceedings of International Scientific Conference "Investment, Construction, Real Estate: New Technologies and Special-Purpose Development Priorities", MATEC Web of Conferences, 2018, 7 p.:

անցնող տրանսպորտային միջանցքներին է անդրադառնում նաև Գ. Նազարյանի ու Ա. Փախլյանի[42] աշխատությունը:

Հենվելով ՍԾՏՀԿ-ի ու ՏՐԱՍԵԿԱ-ի վերաբերյալ ընդհանրական ուսումնասիրությունների վրա՝ սույն ատենախոսությունը փորձել է գնահատել Հայաստանի տարանցման հնարավորությունների բարելավման գործում այս հարթակների ընձեռած կարգավորումների արդյունավետությունը:

Ծովային ելք չունեցող զարգացող երկրների բազմակողմ համագործակցության վերաբերյալ ուսումնասիրությունները խիստ սակավաթիվ են: Այս առումով առանձնանում է Ծովային ելք չունեցող զարգացող երկրների միջազգային գիտահետազոտական կենտրոնի գլխավոր տնօրեն Օ. Էրդենեցոգտի[43] աշխատությունը, որը Մոնղոլիայի տեսանկյունից ընդգծում է ԱՀԿ-ի շրջանակում միջազգային տնտեսական բանակցություններին առավել ակտիվ ներգրավման, ծովային ելք չունեցող զարգացող այլ երկրների հետ բանակցային առանձին խումբ ստեղծելու կարևորությունը:

Միջազգային հարթակներում բազմակողմ համագործակցության խնդիրներն ուսումնասիրելիս օգտակար է եղել Ա. Նարլիկարի[44]՝ ԱՀԿ-ում ձևավորված բանակցային խմբերում զարգացող երկրների ներգրավման օրինաչափությունները ներկայացնող աշխատությունը:

Հայ հեղինակների աշխատություններից անհրաժեշտ է նշել Ա. Մարջանյանի[45] հոդվածը, որում ընդգծվում է ՄԱԿ-ի շրջանակում և միջազգային այլ հարթակներում ծովային ելք չունեցող երկրների «ինքնակազմակերպման, հիմնախնդիրների բարձրաձայնման և լուծումների մշակման ու իրացման խնդրի» հրատապությունը:

Ի տարբերություն վերոնշյալ հեղինակների առջև դրված հետազոտական խնդիրների՝ սույն ատենախոսությունում փորձում ենք վերլուծել Հայաստանի տարանցիկ իրավունքների իրացման վրա ծովային ելք չունեցող զարգացող երկրների բազմակողմ համագործակցության ազդեցությունը, գնահատել բազմակողմ արտաքին քաղաքական գործիքակազմի կիրառման հնարավոր դերը ծովային ելքի բացակայության հիմնախնդրի հասցեագրման գործում:

---

[42] Տե՛ս **Назарян Г.**, **Пахлян А.**, Развитие транспортных структур на Южном Кавказе путем формирования международных транспортных коридоров, Проблемы и перспективы развития сотрудничества между странами Юго-Восточной Европы в рамках Черноморского экономического сотрудничества и ГУАМ, сб. науч. тр., Ростов-на-Дону, Донецк, 2013, с. 280-283:

[43] Տե՛ս **Erdenetsogt O.**, The Importance of Multilateral Trade Negotiations for LLDCs and Mongolia in Particular, *The Northeast Asian Economic Review*, 4(2), 2016, pp. 53-67:

[44] Տե՛ս **Narlikar A.**, International Trade and Developing Countries: Bargaining Coalitions in the GATT & WTO, London, Routledge, 2003, 238 p.:

[45] Տե՛ս **Մարջանյան Ա.**, Կողպված երկրներ, «Օրբելի» վերլուծական-հետազոտական կենտրոն, 07.05.2020, https://orbeli.am (հասանելի է առ 12.11.2025):

Աղբյուրագիտական հիմքը: Ատենախոսության համար աղբյուրագիտական կարևոր հիմք են ծառայել ՄԱԿ-ի միջազգային պայմանագրերի առցանց հավաքածուում[46] հասանելի՝ ծովային ելք չունեցող երկրների տարանցիկ իրավունքներն ամրագրող միջազգային բազմակողմ պայմանագրերը[47]:

Տարանցիկ իրավունքների մերժման իրավաչափությունն ուսումնասիրելիս արժեքավոր աղբյուր են հանդիսացել Արդարադատության միջազգային դատարանի (ԱՄԴ)՝ պետությունների հայեցողության խնդրի վերաբերյալ դրույթներ պարունակող վճիռները[48]:

Կարևոր նշանակություն է ունեցել տարանցման ոլորտը կարգավորող հայ-վրացական և հայ-իրանական երկկողմ իրավապայմանագրային դաշտերի ուսումնասիրությունը: Ըստ այդմ՝ օգտագործվել են Հայաստանի իրավական տեղեկատվության համակարգում[49] առկա շուրջ մեկ տասնյակ պայմանագրեր:

Ուսումնասիրել ենք ՍԾՏՀԿ-ի ու ՏՐԱՍԵԿԱ-ի շրջանակներում ընդունված՝ տարանցման, տրանսպորտային համագործակցության ընդհանուր կարգավորումներ սահմանող փաստաթղթերը՝ պայմանագրեր, արձանագրություններ, Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից Հայաստանի դեմ արված վերապահումներ ու վերջինիս կողմից՝ դրանց առարկություններ, որոնք հասանելի են ՍԾՏՀԿ-ի ու ՏՐԱՍԵԿԱ-ի պաշտոնական կայքէջերում[50], Հայաստանի իրավական տեղեկատվության համակարգում:

Օգտվել ենք Առավել նվազ զարգացած, դեպի ծով ելք չունեցող զարգացող և փոքր կղզիական զարգացող երկրների հարցերով ՄԱԿ-ի բարձր հանձնակատարի գրասենյակի[51]՝ Ծովային ելք չունեցող զարգացող երկրների խմբի վերաբերյալ փաստաթղթերի հարուստ բազայից:

---

[46] Տե՛ս United Nations Treaty Collection, https://treaties.un.org/ (հասանելի է առ 12.11.2025):

[47] Տե՛ս, օրինակ, Statute on Freedom of Transit, Barcelona, 1921, League of Nations, Treaty Series, vol. 7, No. 171; Convention on Transit Trade of Land-locked States, New York, 1965, United Nations, Treaty Series, vol. 597, No. 8641; United Nations Convention on the Law of the Sea, Montego Bay, 1982, United Nations, Treaty Series, vol. 1833, No. 31363:

[48] Տե՛ս Military and Paramilitary Activities in and against Nicaragua (Nicaragua v. United States of America), Merits, Judgment, I.C.J. Reports 1986; Oil Platforms (Islamic Republic of Iran v. United States of America), Judgment, I.C.J. Reports 2003; Certain Questions of Mutual Assistance in Criminal Matters (Djibouti v. France), Judgment, I.C.J. Reports 2008:

[49] Տե՛ս Հայաստանի իրավական տեղեկատվության համակարգի պաշտոնական կայքէջը՝ https://www.arlis.am/ (հասանելի է առ 12.11.2025):

[50] Տե՛ս ՍԾՏՀԿ-ի պաշտոնական կայքէջը՝ http://www.bsec-organization.org/ (հասանելի է առ 12.11.2025), ՏՐԱՍԵԿԱ-ի պաշտոնական կայքէջը՝ http://www.traceca-org.org/ (հասանելի է առ 12.11.2025):

[51] Տե՛ս գրասենյակի պաշտոնական կայքէջը՝ https://www.un.org/ohrlls/content/landlocked-developing-countries (հասանելի է առ 12.11.2025):

Մեծ կարևորություն են ունեցել արխիվային նյութերը: Մասամբ Թուրքիայի և հատկապես Վրաստանի ու Իրանի հետ Հայաստանի հարաբերություններում տարանցման հարցն ուսումնասիրելիս օգտակար են եղել ՀՀ ԱԳՆ Պատմադիվանագիտական բաժնի նյութերը:

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակը ծովային ելք չունեցող երկրների ընդհանուր փորձի համատեքստում Հայաստանի տարանցիկ իրավունքների իրացման վրա ազդող իրավական և քաղաքական գործոնների վերլուծությունն է:

Այդ նպատակի շրջանակում առանձնացվել են հետևյալ խնդիրները.

1. Վեր հանել ծովային ելք չունեցող երկրների տարանցիկ իրավունքների իրացման վրա ազդող ընդհանուր իրավական և քաղաքական գործոնները:
2. Վերլուծել Թուրքիայի կողմից հայ-թուրքական սահմանի միակողմանի փակման իրավական և քաղաքական առանձնահատկությունները:
3. Ուսումնասիրել Վրաստանի և Իրանի տարածքով տեղի ունեցող հայկական բեռնափոխադրումների տարանցման ռեժիմները, ներկայացնել դրանց վրա ազդող գործոնները:
4. Գնահատել Հայաստանի տարանցման հնարավորությունները տարածաշրջանային այն հարթակների շրջանակներում ընդունվող կարգավորումների համատեքստում, որոնք ներառում են Հայաստանի առափնյա հարևաններին:
5. Ներկայացնել ծովային ելք չունեցող զարգացող երկրների բազմակողմ համագործակցության առանձնահատկությունները, գնահատել այդ համագործակցության ազդեցությունը Հայաստանի տարանցիկ իրավունքների իրացման վրա:

Ուսումնասիրության տեսամեթոդական հիմքը: Սույն ուսումնասիրությունն իրականացնելիս առաջնորդվել ենք միջազգային հարաբերությունների բնույթի վերաբերյալ քաղաքական ռեալիզմի ընդհանուր մոտեցումներով՝ համադրելով թե՛ դասական, թե՛ կառուցվածքային ռեալիզմի հարացույցերը[52]: Ծովային ելք չունեցող և տարանցիկ երկրների միջև հարաբերությունների օրինաչափությունների, տարանցիկ իրավունքների իրացման վրա ազդող քաղաքական խոչընդոտների ուսումնասիրությունն իրականացվել է ուժերի հարաբերակցության, պետությունների արտաքին քաղաքական որոշումների վրա ազդող կառուցվածքային սահմանափակումների վերաբերյալ քաղաքական ռեալիզմի ընդհանուր տեսական շրջանակի հիման վրա:

---

[52] Տե՛ս **Wohlforth W. C.**, Realism, Reus-Smit Ch., Snidal D. (eds.), The Oxford Handbook of International Relations, Oxford, Oxford University Press, 2008, pp. 131-149:

Ատենախոսության մեթոդական ապարատը լրացվել է վերացարկման, վերլուծության, համադրության, ինդուկցիայի, դեդուկցիայի, համեմատության ընդհանուր գիտական մեթոդներով:

Իր առափնյա հարևանների հետ Հայաստանի հարաբերություններում դեպի ծով ազատ ելքի խնդիրը ներկայացնելիս կիրառվել է նաև պատմական մոտեցումը՝ վեր հանելու կողմերի դիրքավորման էվոլյուցիան և դրա վրա ազդող գործոնները տարանցման պայմանների շուրջ երկկողմ բանակցությունների համատեքստում:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները: Եթե Թուրքիայի և Իրանի հետ Հայաստանի հարաբերություններում տարանցման հարցի ուսումնասիրությունը ժամանակագրական առումով ընդգրկում է 1991թ. Հայաստանի անկախացումից մինչև մեր օրերն ընկած ժամանակահատվածը, իսկ Վրաստանի հետ հարաբերությունների դեպքում այդ ստորին սահմանն ընդլայնվում է՝ համառոտ կերպով ընդգրկելով Հայաստանի առաջին հանրապետության տարիները, ապա ծովային ելք չունեցող երկրների և հարևան առափնյա երկրների միջև հարաբերությունների ընդհանուր ուսումնասիրությունը, տարանցիկ իրավունքների վրա ազդող իրավաքաղաքական գործոնների վերհանումը չեն սահմանափակվում հստակ ժամանակագրական շրջանակներում: Իրավունքների իրացման քաղաքական հիմքերը վերլուծելիս հողում է կատարվում Հին Հունաստանին, իսկ տարանցման ազատության սկզբունքն ուսումնասիրելիս մեջբերվում են միջազգային իրավունքի նախահայրերի՝ 16-րդ, 17-րդ դարերի տեսությունները:

Ատենախոսության գիտական նորույթը: Փորձ է արվել համապարփակ կերպով ներկայացնել Հայաստանի՝ ծովային ելք չունեցող երկրի կարգավիճակից բխող տարանցիկ իրավունքների իրացման վրա ազդող իրավական և քաղաքական գործոնները: Դեռևս շրջանառության մեջ չեղած արխիվային նյութերի հիման վրա ատենախոսությունն ուսումնասիրում է դեպի ծով ազատ ելքի խնդիրն իր առափնյա հարևանների հետ Հայաստանի հարաբերություններում:

Ուսումնասիրելով հայ-թուրքական սահմանի միակողմանի փակումն իրավաքաղաքական հարթությունում՝ վեր են հանվել Թուրքիայի դեմ իրավական գործընթացներ նախաձեռնելու խոչընդոտները:

Ուսումնասիրելով տարանցման հարցում Վրաստանի նկատմամբ Հայաստանի որդեգրած քաղաքականությունը՝ հիմնավորվել է դրա զգուշավոր բնույթը, ներկայացվել խնդրի շուրջ հանրային հռետորաբանության միտումները, վեր հանվել Վրաստանի տարածքով հայկական ապրանքների տարանցման վրա բացասաբար ազդող արտաքին գործոնները:

Ուսումնասիրվել է տարանցման հարցը Իրանի հետ Հայաստանի հարաբերություններում՝ համեմատելով իրանական և վրացական ուղղությունների

որոշ առանձնահատկություններ, վեր հանելով իրանական ուղու տարանցիկ ներուժի իրացման թե՛ երկկողմ, թե՛ աշխարհաքաղաքական խոչընդոտները:

Ուսումնասիրելով Հայաստանն ու իր առափնյա հարևաններին ներառող տարածաշրջանային տնտեսական հարթակների՝ տարանցման պայմանների վերաբերյալ ընդհանուր կարգավորումները՝ ցույց է տրվել դրանց անարդյունավետությունը Հայաստանի տարանցման հնարավորությունների բարելավման գործում:

Հստակեցվել են ծովային ելք չունեցող զարգացող երկրների բազմակողմ համագործակցության սահմանները՝ ներկայացնելով այդ համագործակցության վրա բացասաբար ազդող գործոնները: Հիմնավորվել է ՄԱԿ-ում ստեղծված Ծովային ելք չունեցող զարգացող երկրների խմբին Հայաստանի անդամակցության քաղաքական անհրաժեշտությունը:

Ատենախոսության կիրառական նշանակությունը: Ատենախոսության դրույթները կարող են օգտակար լինել ծովային ելք չունեցող երկրների արտաքին քաղաքականությունը, ինչպես նաև Թուրքիայի, Վրաստանի և Իրանի հետ Հայաստանի հարաբերություններն ուսումնասիրողների համար, կիրառվել այդ թեմաների վերաբերյալ բուհական դասընթացներում: Դրանք կարող են օգտակար լինել նաև ՀՀ արտաքին քաղաքականության և ծովային ելքի բացակայության հիմնախնդիրը հասցեագրելու ռազմավարության մշակման գործընթացներում:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված երեք գիտական հոդվածներում, որոշ դրույթներ ներկայացվել են նաև ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի կազմակերպած՝ «Միջազգային հարաբերությունների արդի հիմնախնդիրները» թեմայով գիտաժողովում (Երևան, 17-18 դեկտեմբերի, 2019թ.): Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի կողմից:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (յոթ ենթագլուխներով), եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից, հավելվածից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 159 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, սահմանվում են ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, նպատակն ու խնդիրները, ներկայացվում են հիմնախնդրի գիտական ուսումնասիրվածության աստիճանը, հետազոտության աղբյուրագիտական, տեսամեթոդական հիմքերը, ժամանակագրական սահմանները, գիտական նորույթը:

Առաջին գլուխը վերնագրված է **«Ծովային ելք չունեցող երկրների տարանցիկ իրավունքների իրացման իրավաքաղաքական հիմքերը»**: Այն բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին՝ **«Դեպի ծով ազատ ելքի իրավունքը և տարանցիկ երկրների ինքնիշխանության սկզբունքը»** ենթագլխում ուսումնասիրվում է տարանցիկ երկրների ինքնիշխանության և դեպի ծով ազատ, անխափան ելքի տրամադրման սկզբունքների միջև առկա բախումը: Անդրադարձ է կատարվում ծովային ելք չունեցող երկրների տարանցիկ իրավունքները կարգավորող միջազգային իրավական հիմնական փաստաթղթերին, քննության են առնվում այդ փաստաթղթերի՝ դեպի ծով ազատ ելքի իրավունքը սահմանափակող բացառություններ նախատեսող դրույթները:

Առաջին գլխի երկրորդ՝ **«Տարանցիկ իրավունքների իրացման քաղաքական խոչընդոտները»** ենթագլխում տարանցիկ իրավունքների ամբողջական մերժման և դեպի ծով ելքի տրամադրման հարցը որպես հարկադրանքի գործիք օգտագործելու այլ օրինակների ուսումնասիրության հիման վրա ներկայացվում են ծովային ելք չունեցող երկրների տարանցիկ իրավունքների իրացման քաղաքական խոչընդոտները, դրանց ազդեցությունը սրող կամ մեղմացնող գործոնները:

Երկրորդ գլուխը վերնագրված է **«Դեպի ծով ազատ ելքի խնդիրը հարևանների հետ Հայաստանի հարաբերություններում»**: Այն բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին՝ **«Դեպի ծով ազատ ելքի խնդիրը Թուրքիայի հետ հարաբերություններում»** ենթագլխում քննության է առնվում Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակման քաղաքականությունը: Իրավական դասակարգման է ենթարկվում սահմանի միակողմանի փակումը: Անդրադարձ է կատարվում Թուրքիայի դեմ սահմանի փակման հարցով իրավական գործընթացներ նախաձեռնելու խնդրին:

Երկրորդ գլխի երկրորդ՝ **«Դեպի ծով ազատ ելքի խնդիրը Վրաստանի հետ հարաբերություններում»** ենթագլխում Վրաստանի տարածքով հայկական ապրանքների տարանցման խնդիրն ուսումնասիրվում է անկախությունից ի վեր Վրաստանի նկատմամբ Հայաստանի որդեգրած «զգուշավոր քաղաքականության» համատեքստում: Անդրադարձ է կատարվում Վրաստանի տարածքով դեպի Ռուսաստան տարանցման հարցին: Արխիվային նյութերի ուսումնասիրության հիման վրա ներկայացվում են տարանցիկ

բեռնափոխադրումների համար գանձվող սակագների հարցի շուրջ հայ-վրացական երկկողմ բանակցությունների առանձնահատկությունները:

Երկրորդ գլխի երրորդ՝ **«Դեպի ծով ազատ ելքի խնդիրն Իրանի հետ հարաբերություններում»** ենթագլխում ուսումնասիրվում են իրանական տարանցիկ ուղու ներուժի իրացման աշխարհաքաղաքական խոչընդոտները: Տարանցիկ բեռնափոխադրումների պայմանների շուրջ հայ-իրանական երկկողմ բանակցությունների առանձնահատկությունները ևս ներկայացվում են արխիվային նյութերի ուսումնասիրության հիման վրա: Անդրադարձ է կատարվում տարանցիկ բեռնափոխադրումները կարգավորող հայ-իրանական իրավապայմանագրային դաշտին ու դրանում առկա բացերին:

Երրորդ գլուխը վերնագրված է **«Դեպի ծով ազատ ելքի խնդիրը Հայաստանի բազմակողմ արտաքին քաղաքականությունում»**: Այն բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին՝ **«Տարածաշրջանային համագործակցությունը և Հայաստանի՝ դեպի ծով ազատ ելքի խնդիրը»** ենթագլխում ներկայացվում է իր առափնյա հարևաններին ներառող տարածաշրջանային հարթակներում Հայաստանի ներգրավման ընդհանուր բնույթը: Ուսումնասիրվում են ՍԾՏՀԿ-ի և ՏՐԱՍԵԿԱ-ի շրջանակներում ընդունված՝ տարանցման ոլորտը կարգավորող մեխանիզմները: Անդրադարձ է կատարվում տարածաշրջանային հաղորդակցության ուղիների ապաշրջափակման գործընթացներին:

Երրորդ գլխի երկրորդ՝ **«Ծովային ելք չունեցող զարգացող երկրների բազմակողմ համագործակցությունը և Հայաստանը»** ենթագլխում քննության են առնվում ծովային ելք չունեցող զարգացող երկրների բազմակողմ համագործակցության առանձնահատկությունները: Գնահատվում է տարանցման պայմանների բարելավման հարցում ծովային ելք չունեցող զարգացող երկրների հավաքական ազդեցությունը, համեմատվում են ՄԱԿ-ում և միջազգային այլ հարթակներում այդ երկրների փոխգործակցության ինստիտուցիոնալ հիմքերը:

Եզրակացության մեջ ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները, եզրահանգումներն ու առաջարկությունները.

1. Ծովային ելք չունեցող երկրներին դեպի ծով ազատ ու անխափան ելք տրամադրելու խնդիրը կարգավորող միջազգային բազմակողմ պայմանագրերը չեն կաշկանդում տարանցիկ երկրներին՝ թելադրելու տարանցման իրենց ձեռնտու պայմաններ, որոշ դեպքերում ամբողջովին մերժելու տարանցման իրավունքը:

2. Թեև ազատ տարանցման իրավունքը հավասարակշռող՝ իրենց տարածքի նկատմամբ լիակատար ինքնիշխանության պահպանման սկզբունքն իրավունք է վերապահում տարանցիկ երկրներին ձեռնարկելու բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու համար իրենց օրինական շահերը, դեպի ծով ազատ ելք տրամադրելու միջազգայնորեն ստանձնած պարտավորություններից հրաժարվելիս տարանցիկ երկիրը խնդիր ունի պատշաճ կերպով հիմնավորելու

կիրառված սահմանափակումը: Տարանցիկ երկրների նման գործողությունների իրավաչափությունը դատական կարգով վիճարկելու հարցում քաղաքական կամքի բացակայությունն ու տարանցման վերաբերյալ միջազգային հիմնական պայմանագրերի ոչ ամբողջական վավերացումը խոսում են այն մասին, որ ծովային ելք չունեցող երկրներն իրենց տարանցիկ իրավունքների իրացմանը նախ և առաջ ձգտում են առափնյա երկրների հետ քաղաքական պայմանավորվածությունների միջոցով:

3. Հարևան երկրների ենթակառուցվածքներից կենսական կախվածությունն ու ուժերի անհավասար հարաբերակցությունն ստեղծում են տարանցիկ իրավունքների իրացման քաղաքական խոչընդոտներ, որոնց ազդեցությունը սրող կամ մեղմացնող գործոնների շարքում են տարանցիկ երկրների հետ հարաբերությունների որակը, տարանցման այլընտրանքային ուղիների առկայությունը, տարածաշրջանային ինտեգրման մակարդակը, տարանցիկ ուղու շահագործման հարցում մեծ տերությունների դերակատարությունը:

4. Տարանցիկ իրավունքների իրացման քաղաքական խոչընդոտների հետևանքների մեղմումը պահանջում է իրավական, քաղաքական և տնտեսական հաշվարկների վրա հիմնված բազմաշերտ ռազմավարություն: Յուրաքանչյուր առափնյա հարևանի հետ բանակցությունների պարագայում անհրաժեշտ է գնահատել երկկողմ և բազմակողմ գործիքակազմերի օգտակարությունը, տարանցման պայմանների բարելավման հարցում տարածաշրջանային և աշխարհաքաղաքական ուժերի շահերը համադրելու հնարավորությունը:

5. Տարանցման բարենպաստ պայմանների ապահովման համար կարևոր նախադրյալ է հարևան երկրից միակողմանի կախվածության վերածումը փոխկախվածության: Առափնյա երկրների նկատմամբ տարածաշրջանային տարանցիկ դերը բանակցային ազդեցիկ լծակի հնարավորություն է ստեղծում: Այս առումով ՀՀ կառավարության «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը, կյանքի կոչման դեպքում նպաստելով տարածաշրջանում ՀՀ տարանցիկ դերի ամրապնդմանը, կարող է դրական ազդեցություն ունենալ նաև հայկական ապրանքների տարանցման համար առավել շահեկան պայմանների համաձայնեցման վրա:

6. Հայաստանի դեմ Թուրքիայի կողմից կիրառված փակման ռեժիմը, լինելով ծովային ելք չունեցող երկրի տարանցիկ իրավունքների ամբողջական մերժման օրինակ, կրում է ինչպես շրջափակման, այնպես էլ տնտեսական էմբարգոյի հատկանիշներ: ԼՂ հակամարտությամբ և հայ-թուրքական երկկողմ հարաբերությունների խնդրահարույց հարցերով պայմանավորված քաղաքական դրդապատճառները, Հայաստանի ոչ տնտեսական քաղաքականության վրա ազդելու շարժառիթը, ինչպես նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի

հավանության բացակայությունը հիմք են տալիս սահմանի փակումը որպես միակողմանի հարկադրանքի միջոց դասակարգելու համար:

7. Սահմանի փակման խնդրով Թուրքիայի դեմ իրավական գործընթացներ սկսելու հարցում Հայաստանի դժկամությունը հիմնված է անվտանգության հետ կապված բացառություններ նախատեսող դրույթների պատճառով առաջացած անորոշության, Թուրքիայի դեմ կիրառելի միջազգային պայմանագրերի ընձեռած իրավական հնարավորությունների նկատմամբ թերահավատության, դատական գործընթացի՝ Հայաստանի համար կարևոր նշանակություն ունեցող այլ հիմնախնդիրներին առնչվող ռիսկերի, ինչպես նաև հարաբերությունները երկկողմ բանակցությունների միջոցով կարգավորելու ձգտման վրա: Նշված գործոնները հիմնավորում են Հայաստանի կողմից մինչ օրս որդեգրված զգուշավոր մոտեցումը:

8. 44-օրյա պատերազմից հետո Անկարայից հնչած հայտարարությունները հուշում են, որ Թուրքիան շարունակեց օգտագործել սահմանի հարցը որպես հարկադրանքի գործիք ինչպես Հայաստան-Ադրբեջան, այնպես էլ Հայաստան-Թուրքիա երկկողմ հարաբերություններում Հայաստանին քաղաքական զիջումներ պարտադրելու նպատակով:

9. Հայաստանի՝ ծովային ելք չունեցող երկրի կարգավիճակի և դրանից բխող տարանցիկ իրավունքների մասին անհրաժեշտ է պաշտոնական մակարդակով առավել հաճախ բարձրաձայնել Թուրքիայի հետ հարաբերությունների համատեքստում՝ որպես սահմանի բացման անհրաժեշտությունն ընդգծող դիվանագիտական լրացուցիչ փաստարկ, միևնույն ժամանակ՝ առանց Թուրքիայի հասցեին ուղիղ մեղադրանքներ հնչեցնելու՝ հաշվի առնելով Հարավային Կովկասում ստեղծված ներկա քաղաքական իրավիճակն ու Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացին չվնասելու անհրաժեշտությունը: Այս շեշտադրումը կարևոր է ոչ միայն որպես սահմանի բացման, այլ սահմանի հնարավոր բացման դեպքում՝ նաև որպես տարանցման բարենպաստ պայմաններն ապահովելու անհրաժեշտությունն ընդգծող փաստարկ:

10. Արտաքին շուկաների հետ Հայաստանի կապն ապահովելու հարցում Վրաստանի տարանցիկ նշանակությունը, դեպի ծով այլընտրանքային մրցունակ ուղիների բացակայությունը, լինելով Վրաստանի նկատմամբ Հայաստանի որդեգրած զգուշավոր քաղաքականության հիմքում, զգալիորեն սահմանափակում են հայկական ապրանքների տարանցման համար ավելի լավ պայմաններ ստեղծելու հարցում Հայաստանի բանակցային կարողությունները: Դրանով հանդերձ, տարանցման բարձր սակագների նվազեցման խնդիրը մշտապես պահելով հայ-վրացական երկկողմ օրակարգում, պաշտոնական Երևանը կտրուկ փոխեց խնդրի շուրջ հանրային հռետորաբանությունը 2008-2009թթ., երբ հայ-թուրքական սահմանի հնարավոր բացման, դեպի ծով

այլընտրանքային ուղիների գործարկման համատեքստում Վրաստանի «մենաշնորհային» դիրքը վիճարկելու հեռանկար էր ստեղծվում:

11. Ռուս-վրացական հակամարտությունն ու Վրաստան-Ադրբեջան-Թուրքիա եռակողմ համագործակցությունը Վրաստանի տարածքով հայկական ապրանքների տարանցման վրա բացասաբար ազդող արտաքին գործոններ են: Եթե առաջինն արտահայտվում է աբխազական երկաթուղու վերագործարկման հարցում առաջացած փակուղով ու հատկապես ազդում դեպի Ռուսաստան տարանցման պայմանների վրա, ապա երկրորդն ընդգծվեց 44-օրյա պատերազմում զենքի տարանցման հարցում Վրաստանի խտրական քաղաքականությամբ:

12. Վրաստանի հետ տարանցման շուրջ բանակցությունների՝ անցած երեք տասնամյակների փորձը ցույց է տալիս, որ տարանցման բարենպաստ պայմանների ապահովման հարցում հաջողություն գրանցելու համար նշված խնդրի շուրջ բանակցություններին անհրաժեշտ է հաղորդել գործարքային տրամաբանություն: Այս առումով Վրաստանի և Իրանի միջև Հայաստանի կամրջող դերի ակտիվացումը, Վրաստանի համար Հայաստանի տարանցիկ նշանակության մեծացումը թե՛ եռակողմ ձևաչափում, թե՛ Հյուսիս-Հարավ միջանցքի համատեքստում կարող է ամրապնդել Վրաստանի հանդեպ Հայաստանի բանակցային դիրքը:

13. Թեև իրանական տարանցիկ ուղու ծանրաբեռնվածությունը զիջում է վրացականին, վերջինի բնականոն աշխատանքի թե՛ անխուսափելի (Վրաստանում ծագող ներքին անկայունություն, վրաց-ռուսական հակամարտության սրացում), թե՛ արհեստական (Վրաստանի տարածքով հայկական ապրանքների՝ գլխավորապես ռազմական տեխնիկայի տարանցման արգելք) խաթարման դեպքում ընդգծվում է Իրանի տարածքով արտաքին շուկաների հետ Հայաստանի կապի, իրանական նավահանգիստներ տանող ուղու ռազմավարական նշանակությունը:

14. Իրանական տարանցիկ ուղու ներուժի ամբողջական իրացումը բախվում է ինչպես երկկողմ արգելակների, օրինակ՝ հայկական բեռնատարներից գանձվող ճանապարհային բարձր վճարները և այլն, այնպես էլ աշխարհաքաղաքական խոչընդոտների՝ ի դեմս, առաջին հերթին, Իրանի դեմ արևմտյան պատժամիջոցների:

15. Փոխադրվող բեռների համեմատաբար փոքր ծավալի, տարանցման վրա արևմտյան պատժամիջոցների անհաղթահարելի ազդեցության ու Իրանի ռազմաքաղաքական կշռի պատճառով, հայ-վրացական հարաբերություններում առկա նույն խնդրի համեմատ, Իրանի տարածքով դեպի ծով ազատ ելքի ու հայկական բեռների անխոչընդոտ տարանցման հարցում Թեհրանի հանդեպ Հայաստանի հասարակական-քաղաքական շրջանակների ակնկալիքներն առավել չափավոր են: Երկկողմ օրակարգում տարանցման հարցը հայկական

կողմի հիմնական առաջնահերթություններից մեկն էր 1990-ական թթ., երբ իրանական տարանցիկ ուղին դարձել էր վրացական ուղու մրցունակ այլընտրանքը:

16. Հարավային Կովկասում ստեղծված ներկա աշխարհաքաղաքական իրավիճակի, հայ-իրանական խորացող գործընկերության համատեքստում նպաստավոր նախադրյալներ են ստեղծվել Իրանի տարածքով հայկական բեռների տարանցման առավել շահեկան պայմաններ ապահովելու ուղղությամբ Իրանի հետ աշխատանքներն ակտիվացնելու համար: Այս առումով կարևոր է երկկողմ ջանքերի զուգորդումը Հայաստան-Իրան-Հնդկաստան եռակողմ ձևաչափի ակտիվացմանն ուղղված քայլերին: Անհրաժեշտ է նաև ամերիկյան կողմի հետ ինտենսիվ բանակցություններ վարել Իրանի տարածքով հայկական ապրանքների տարանցման վրա ամերիկյան պատժամիջոցների հնարավոր ազդեցությունը չեզոքացնելու ուղղությամբ:

17. ՍԾՏՀԿ-ի և ՏՐԱՍԵԿԱ-ի շրջանակներում թուրքական և ադրբեջանական վերապահումները ծովային ելք չունեցող Հայաստանի համար անհնարին են դարձրել այդ երկու տարածաշրջանային հարթակների ընձեռած մեխանիզմների լիարժեք օգտագործումը, որոնք կարող էին նպաստել տրանսպորտային կապի զարգացմանն ու ծովային անարգել ելքի տրամադրմանը: Թեև այս հարթակներում Հայաստանի ներգրավումը քաղաքականապես անհրաժեշտ է, տնտեսական առումով՝ ձևական է եղել, քանի որ Հայաստանը չի օգտվել թե՛ ՍԾՏՀԿ-ի, թե՛ ՏՐԱՍԵԿԱ-ի կանոնադրական նպատակներից բխող հնարավորություններից:

18. Երբ Հարավային Կովկասում նոր շունչ են ստացել հաղորդակցության ուղիների ապաշրջափակմանն ուղղված քայլերը, Հայաստանի ու վերջինիս հարևանների տարածքով արևելքից արևմուտք և հյուսիսից հարավ ձգվող ուղիները հայտնվել են աշխարհաքաղաքական շահերի բախման կիզակետում: «Հյուսիս-հարավ» տրանսպորտային միջանցքի հիմնական դերակատարներից Իրանի և Հնդկաստանի աննախադեպ ակտիվացումը Հայաստանի՝ միջանցքի գործուն մասնակից դառնալու հնարավորություն է ստեղծում: «Խաղաղության խաչմերուկ» նախագծին, «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության և բարգավաճման» հաղորդակցության ծրագրին զուգահեռ, Հայաստանը պետք է ակտիվացնի «Հյուսիս-հարավ» տրանսպորտային միջանցքի մաս դառնալու ջանքերը, ինչը կարևոր է ոչ միայն տնտեսական առումով, այլև աշխարհաքաղաքական հավասարակշռության պահպանման անհրաժեշտության համատեքստում:

19. Տարանցման պայմանների բարելավման հարցում ծովային ելք չունեցող զարգացող երկրների հավաքական ազդեցությունը խիստ սահմանափակ է: Թեև այդ երկրների բազմակողմ համագործակցությունն ինստիտուցիոնալ հիմք է ստացել ՄԱԿ-ում, նրանց միջև առկա բազմաշերտ

տարբերությունները, արտաքին քաղաքական չհամընկնող առաջնահերթությունները և հավաքական ազդեցության գործիքների բացակայությունը բացասաբար են անդրադառնում համատեղ բանակցային կարողությունների ձևավորման վրա: Դրանով հանդերձ, ՄԱԿ-ի շրջանակում գործող Ծովային ելք չունեցող զարգացող երկրների խմբի աշխատանքներում Հայաստանի ներգրավումն ունի քաղաքական նպատակահարմարություն մի շարք նկատառումներով, այդ թվում՝ փորձի փոխանակում, կանոնավոր շփումներ մի քանի տասնյակ երկրների հետ, որոնց հետ երկկողմ օրակարգը հարուստ չէ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող այլ ոլորտներով, ինչպես նաև ուժային, ֆինանսական կենտրոններից ստացվող օժանդակություն:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. Զաքարյան Տ., Ծովային ելք չունեցող երկրների տարանցիկ իրավունքների իրացման իրավաքաղաքական հիմքերը, Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, 1(31), 2020, էջ 21-28;
2. Զաքարյան Տ., Ծովային ելք չունեցող զարգացող երկրների բազմակողմ համագործակցության խնդիրները, Հայկական Քաղաքագիտական Հանդես, 1(13), 2020, էջ 105-120;
3. Zakaryan T., Landlocked with closed borders: Armenia's problem of access to the sea, Caucasus Survey, 9(2), 2021, pp. 192-208:

ЗАКАРЯН ТИГРАН СТЕПАНОВИЧ

РЕАЛИЗАЦИЯ ТРАНЗИТНЫХ ПРАВ СТРАН, НЕ ИМЕЮЩИХ ВЫХОДА К МОРЮ, В МЕЖДУНАРОДНЫХ ОТНОШЕНИЯХ (НА ПРИМЕРЕ РА)

Диссертация на соискание научной степени кандидата политических наук по специальности 23.00.04 "Международные отношения". Защита диссертации состоится 23 января 2026 г., в 14:00 часов на действующем в ЕГУ специализированном совете 056 «Политология и международные отношения» МОНКС КВОН РА (адрес: РА, г. Ереван 0025, Алека Манукяна, 1).

РЕЗЮМЕ

В диссертации исследуются отношения между странами, не имеющими выхода к морю, и соседними транзитными странами, с особым вниманием к правовым и политическим факторам, влияющим на реализацию транзитных прав Армении. С точки зрения Армении, эта тема особенно важна в свете проблем свободного доступа к морю из-за многолетней блокады со стороны Турции, а также с учетом растущей важности вопроса открытия экономических и транспортных коммуникаций в рамках текущих процессов на Южном Кавказе.

Во введении обосновывается актуальность темы, определяются объект, предмет, цель и задачи исследования, хронологические рамки работы, проводится обзор использованных источников и литературы, а также излагаются теоретические и методологические основы и научная новизна диссертации.

Первая глава, озаглавленная **"Правовые и политические основы реализации транзитных прав стран, не имеющих выхода к морю,"** анализирует общие правовые и политические факторы, влияющие на реализацию транзитных прав такими странами.

Вторая глава, озаглавленная **"Проблема свободного доступа к морю в отношениях Армении с соседними странами,"** исследует правовые и политические аспекты закрытия армяно-турецкой границы, режимы армянских грузоперевозок через Грузию и Иран, а также факторы, влияющие на их функционирование.

Третья глава, озаглавленная **"Проблема свободного доступа к морю в многосторонней внешней политике Армении,"** рассматривает транзитные возможности Армении в рамках региональных платформ, включающих её прибрежные соседние страны. В ней выделяются особенности многостороннего сотрудничества развивающихся стран, не имеющих выхода к морю, и оценивается его влияние на реализацию транзитных прав Армении.

ZAKARYAN TIGRAN STEPAN

THE REALIZATION OF TRANSIT RIGHTS OF LANDLOCKED COUNTRIES IN INTERNATIONAL RELATIONS (ON THE EXAMPLE OF THE RA)

Dissertation under 23.00.04 "International Relations," aspiring to earn Ph.D. in Political Sciences. The defense of the dissertation will take place on 23 January 2026, at 14:00 at the Specialized Council 056 "Political Sciences and International Relations" of the RA MoESCS HESC, operating at Yerevan State University (Address: RA, Yerevan, 0025, 1 Alex Manoogian).

SUMMARY

The dissertation examines the relations between landlocked countries and their neighboring transit countries, with particular attention to the legal and political factors influencing the realization of Armenia's transit rights. From Armenia's perspective, this topic is of particular significance in light of the challenges to ensuring free access to the sea resulting from the decades-long blockade it faces, as well as the growing importance of the issue of opening economic and transport communications within the framework of the ongoing processes in the South Caucasus.

The introduction establishes the relevance of the topic, defines the objectives and scope of the research, provides a review of the relevant literature, outlines the theoretical and methodological foundations, specifies the chronological framework, and highlights the scientific novelty of the dissertation.

The first chapter, entitled **"Legal and Political Frameworks of the Realization of Transit Rights of Landlocked Countries,"** analyzes the general legal and political factors affecting the exercise of transit rights by landlocked countries.

The second chapter, entitled **"The Problem of Free Access to the Sea in Armenia's Relations with its Neighbors,"** explores the legal and political dimensions of Turkey's unilateral closure of the Armenian–Turkish border, the transit regimes of Armenian cargo transportation through Georgia and Iran, and the factors influencing their operation.

The third chapter, entitled **"The Problem of Free Access to the Sea in Armenia's Multilateral Foreign Policy,"** examines Armenia's transit opportunities in the context of regulations adopted within regional platforms that include Armenia's coastal neighbors. It highlights the characteristics of multilateral cooperation among landlocked developing countries and evaluates the impact of such cooperation on the realization of Armenia's transit rights.